

սա, պատահեցաւ հոն Արիստակէս Վ. Խարբերդցւոյն, որ Կեսարացւոյ հակառակորդներէն էր: Սա խօսեցաւ տեղի եւ անտեղի Կեսարացւոյ դէմ. նուաստացուց անոր բանադրանքին արժէքը. եւ ամէն միջոց բանեցուց, որպէս զի ետ պահէ եպիսկոպոսը երթալու եւ իյնալու Վարդապետին ոտքը: Իւր փառասիրութեան մէջ վիրաւոր եպիսկոպոսին համար հաճելի էր լսել Խարբերդցւոյն խրատը: Որոշեց չերթալ յառաջ: Որպէս զի առ երեւոյթս փրկէ կացութիւնը, խորհեցաւ խօթապատճառ երեւալ. գրեց Կեսարացւոյն չքմեղանքի գիր մը, թէ ճանապարհին հիւանդանալով պիտի չկարենայ դուրս գալ Պրուսայէն. ուստի եւ կը խնդրէ իրմէ, որ գրով արձակէ զինքը կապանքէն: Կեսարացին հաւատ ընծայելով զղջացեալին խօսքերուն, կ'արձակէ զինքը բանադրանքէն գրով:

Նիկոյ ուրախացած իւր յաջողութեան վրայ կը վերադառնայ Լվով. եւ կը ներկայացնէ ժողովրդեան վարդապետին արձակման գիրը:

Սկսած էր խաղաղիւ հրապարակը, երբ յանկարծ կրկին խռովեցաւ:

Կեսարացին վերահասու ըլլալով, թէ Նիկոյ Արիստակէս վարդապետի սաղրանքով չէ ուղած իյնալ իր ոտքը, եւ կեղծեօք հիւանդ ընծայած է ինք զինքը, փութացած էր լուր հասցնել Լվովցիներուն, թէ «նոյն առաջին նշովքն եւ բանադրանքն տակաւին կայ ի վերայ այդ եպիսկոպոսիդ»: